«Պիտի առաջ գնանք»

Ասում է ՀԱՀ նախագահ Հարութիւն Արմենեանը

Օրերս Հայաստանի ամերիկյան համալսարանում (ՀԱՀ) տեղի ունեցավ «ՎիվաՍել-ՄՏՍ»-ի կողմից ֆինանսավորված՝ վիդեոկոնֆերանսի սրահի բացման արարողությունը: Սրահին, որը տեղակայված է ՀԱՀ «Փարամազ Ավեդիսյան» մասնաշենքում, տրամադրվել է 60.6 մլն դրամ: Այն համալրված է հեռահաղորդակցական ինտերակտիվ տեխնոլոգիաների համակարգով եւ տարբեր վայրերում գտնվող դասախոսին եւ ուսանողներին հնարավորություն է ընձեռում հաղորդակցվել միաժամանակյա երկկողմ տեսաշարային եւ ձայնային ազդանշանների միջոցով: ՀԱՀ նախագահ Հարութիւն Արմենեանը նկատեց. *«Համալսարանը միայն կրթություն ստանալու տեղ չէ, այլեւ գիտություն ստեղծելու: Իսկ այդ գիտելիքը ստացվում է ամփոփվելով ոչ միայն մեկ սենյակի մեջ, այլ հաղորդակցության միջոցով»*: «Առավոտը» հայաստանյան ներկայիս կրթական զարգացումների մասին զրուցեց պարոն Արմենեանի հետ: Մեր այն դիտարկմանը, թե Ամերիկյան համալսարանը ժամանակին առաջինն էր, որ այլ երկրի հետ համատեղ համալսարան էր ՀՅ-ում, իսկ այժմ այլ երկրների համալսարանների մասնաճյուղեր բացելը մի տեսակ դարձել է միտում, Հ. Արմենեանն այսպես պատասխանեց. *«Մեր համալսարանը ոչ պետական չէ այն իմաստով, որ ստեղծվել ենք ամերիկյան կառույցի հոգաբարձությամբ եւ հայկական պետության հետ համատեղ: Մեր կապն ավելի զորավոր է, քան մյուս համալսարաններինը, մեր գործունեությունը հիմնված է միացյալ համագործակցության վրա: Մյուս համալսարաններից տարբերությունն այն է, որ դրանք տվյալ պետության, օրինակ՝ գերմանական եւ այլն, ֆինանսավորմամբ են ստեղծված, իսկ մերը՝ անհատների միջոցով»*: Այնուհետեւ զրուցակիցս շեշտեց. *«Այս համալսարանը պիտի լինի նույնքան հայկական, որքան որեւէ այլ հայկական հաստատություն, նույնքան ամերիկյան, որքան ամերիկյան որեւէ համալսարան»*: «Առավոտի» այն դիտարկմանը, թե ամերիկյան համալսարանի շուրջ ինչ-ինչ

Վիդեոկոնֆերանսների նորաբաց սրահը՝ ՀԱՀ-ում:

իրարամերժ խոսակցություններ կան հայաստանյան մյուս բուհերի շրջանակներում, պարոն Արմենեանն այսպես պատասխանեց. *«Դա ոչ թե մեր, այլ բուհերի խնդիրն է: Մենք համագործակցում ենք ԵՊՀ-ի, Բժշկական, Ճարտարագիտական համալսարանների հետ հիմնականում վարչական հարցերի շուրջ: Պետք է աշխատել կրթաջախների վարչական հիմքերի բարելավման ուղղությամբ, հակառակ դեպքում՝ հաստատությունը կկաղա»*: Անդրադառնալով կրթական բարեփոխումներին, նա հայտնեց. *«Այդ բարեփոխումները չեն հաջողվի, եթե չլուծենք վարչական կառույցների հարցը: Արեւմտյան եւ մեր աշխարհի տարբերությունը հենց այն է, որ նրանց մոտ վարչական կառույցները հստակ հիմքերի վրա են»*:

Երբ խոսեցինք Հայաստանում դասախոսների վոր երեւույթների, դասախոսի վարկի մասին, պարոն Արմենեանը նկատեց. *«Եթե տվյալ անհատը հարգանք չունի իր սեփական գործի նկատմամբ, դա պատվով չի անում, ապա նա ամենադժբախտ անհատն է եւ իր գործում չի հաջողի: Իսկ բուհում դրա համար պիտի հատուկ մթնոլորտ ստեղծվի, որը պայմանավորված չէ միայն ֆինանսական հարցերով»*: Խոսքն ամփոփելով՝ Հ. Արմենեանը հավելեց. *«Մեր երկրի հարստությունը ոչ թե ունեցվածքի, այլ գիտական ներուժի մեջ է: Որքան առաջ լինենք գիտական առումով, այնքան տնտեսական վայրիվերումները մեզ համար զորավոր չեն կարող լինել: Չխաբենք մեզ, ասելով, թե առաջ ենք ֆիզիկայի կամ այլ բնագավառներում: Մենք այսօր ետ ենք, պիտի դա ընդունենք եւ մեծ թափով առաջ գնանք»*:

ՏԱԹԵՎ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Aravot. 46/3403/13 March 2009